Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2042
ш

Երրորդ գրքույկ Նոր Դպրոցի Հոգաբարձության:

№ 3.

ՀԱՇԻՒ

ԵՐԵՒԱՆԱՅ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ - ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԵՑՓՈԽ ԴԻՄԻՏՐԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՊԱՊՈՎԻ

Սկսած 1-ից Յունուարի 1902 ամի
մինչև 1-ն Յունուարի 1903 ամի։

1903
Երեւան. Տպարան Էմին Տէր-Գրիգորեանցի։
ЭРИВАНЪ. ТИП. ЭМ. ТЕРЪ-ГРИГОРЯНЦЪ.

13152

№ 3.

ՀԱՇԻ

ԵՐԵՒԱՆԱՅ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԵՐԵՑՓՈԽ ԴԻՄԻՏՐԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՊԱՊՈՎԻ

Սկսած 1-ից Յունուարի 1902 ամի
մինչև 1-ն Յունուարի 1903 ամի։

1903
Երեւան. Տպարան Էմին Տէր-Գրիգորեանցի.
ЭРИВАНЪ. ТИП. ЭМ. ТЕРЪ-ГРИГОРЯНЦЪ.

Дозволено Цензурою, 10 Февраля 1903 г.
гор. Тифлисъ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Երևանայ հայ հասարակութեանը յայտնի է, որ շուտով կլրանայ երեք տարին իմ երեսփոխանութեանս դժուար պաշտաման. իւրաքանչիւր տարի ներկայացրել եմ 'ի տես և ի լուր Երևանայ ժողովրդին և հայ հասատատութիւններին յայսկոյս Կովկասի, իմ տարեկանս ծառայութեան-եկեղեցւոյ գործում ժողովրդից ստացած ու ծախսած կոպէկներից սկսած մինչև հազար մանէթները տպագրուած հաշուետետրակներով. որով ժողովուրդը ճշտիւ հաւատացած է եղած, որ իւր նուիրաբերած լուման հայրենի եկեղեցւոյ, Աստուածային տաճարի փառաւոր բարեզարդութեան և պայծառութեան համար է գործ դրուած, և յընթացս երեք տարուան Երևանայ փոքրիկ հայ հասարակութիւնը իմ ձեռքով 14,000 ռուբլու չափ նուիրաբերել է զուտ դրամով, բացի եկեղեցւոյն ոսկեայ և արծաթեայ ընծայաբերուած սպասներն ու անօթեղէնները, որոնք հազարներ արժեն։ Շատ և շատ մխիթարական է այս մեր ժողովրդեան կրօնասէր Աստուածպաշտութիւնը, այսպէս ջերմեռանդութեամբ շարունակուել է դեռ դարերից առաջ ցարդ և յապայն։ Սակայն ուրախալի կլինէր և աւելի մխիթարական, երբ ոչ թէ միայն քաղաքիս հայ եկեղեցեաց պ. պ. երեսփոխանները այլ և նահանգի բոլոր հայ եկեղեցեաց երեցփոխանն-

ը իրենց տարեկան հաշուատեսութիւնը կարողանային հաւաստիացնել հասարակութեան տրրուած կոպէկների ուղիղ գործադրութեան փաստաթուղթը—հաշուեցուցակը, յականէ յանուանէ տպագրուած ու ձրի բոլորին բաժանուած։ Բաւական չէ երեցփոխանները հայր գործակալների ներկայութեամբ, կամ նորանց թեերի տակ իրենց տարեկան հաշիւները տեսնել։ Գործակալը ինչ գիտէ երեցփոխի տարեկան եկամտից քանակը. ինչ գիտեն և մի քանի պ. պ. հաշուեսեսներ՝ թէ եկեղեցին որքան եկամուտ է ունեցել տարին։ Իսկ ժողովրդից ամեն մինը գիտէ իւր տուածը ճրբ, որքան և ինչ առթիւ, որի համար և աւելի պատշաճաւոր է ժողովրդեանը հաւաստիացնել, ցոյց տալով նրանց իրենց ընծայաբերած կոպէկների որտեղ ծախսուելը, այն էլ տպագրուած հաշուետեսներով, որտեղ այլ ևս չիկարող ծածուկ մնալ և ոչ մի կոպէկ ընծայաբերուած դրամից և իրեղէնից։ Ուրեմն ես որպէս ժողովրդից հրաւիրուած երեցփոխ, ես իմ պարտքս եմ համարել հաշիւ տալ ինչպէս հոգևոր իշխանութեանը, նոյնպէս և ժողովրդից այն պարոններին, որոնք ինձ փոդ են տուել ու յանձնել իմ կարգադրութեան։ Ես նոցա ուղիղ իմ հաշուետեսներս եմ համարում և նոցա էլ ահա հաշիւս ներկայացնում։

1902 Թ. ՆՈՒԻՐԱԲԵՐԱԾ ԻՐԵՂԷՆՆԵՐԸ.

ԲՈՒՐՎԱՌՆԵՐ.

1. Մի հատ բուրվառ, ֆուրաժեայ սպիտակ մետաղից, նուէր Հայկ Գէորգի Յովհաննիսեանից.

ՋԱՀԵՐ.

2. Մի զոյգ բրոնձ ապակեայ ջահեր, եկեղեցւոյ հաշուով։

ՄՈՄԱԿԱԼՆԵՐ.

3. Մի զոյգ փոքրագիր մոմակալներ կարմիր պղնձեայ հնօտի, նուէր №№.

ՍԿՀԻՈՅ ՔՈՂԵՐ.

4. Մի հատ կարմրագոյն քող, սկհւոյ համար, նուէր №№.

ՍՓՈՒՈՑՆԵՐ.

5. Մի սփռոց, փիւրուզագոյն ապրեշումեայ, նուէր Վարանենիկ Յակոբի Ստեփաննոսեանից.

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԹԱՂԻՆԱԿՆԵՐ.

6. Մի հատ վարդագոյն թաշկինակ, նուէր №№.
7. Մի հատ սպիտակ վարդագոյն թաշկինակ, նուէր №№
8. Մի հատ վարդագոյն թաշկինակ, նուէր №№.

ԳՐԵԱՆՔ.

9. Երևանցի պ. Իսահակ Տէր Իսահակեանցը ի յիշատակ իւր հանգուցեալ հօր Աստուածատուր աւագ քահանայի ընծայեց վեց հատոր գրքեր. ա, Պատմութիւն Մովսէսի Խորենացւոյ տպեալ ի Վենետիկ. բ, Երկրորդ մատեան ճառից Նարեկացւոյ. գ. Քննական Կրօնագիտութիւն. դ, Մեկնութիւն Աւետարանի Յովհաննու. ե, Մեկնութիւն Ժամակարգութեան. զ, Անգետաց անպետ.

ԿԱՊԵՐՏՆԵՐ.

10. Մի հատ գոյնաւոր վալաս, 5×1 արշին. նուէր Օհան Վիրաբեանից։

ԿԱՀ ԿԱՐԱՍԻՔ.

11. Մի հատ կլոր ու բարձր սեղանիկ, բուրվառներ կախելու համար, եկեղեցւոյ հաշւով։

12. Մի հատ ջրցող ծառերի համար, նուէր Արշակ Նիկիտիչ Յակովբեանից։

13. Մի հատ թրաշած զրաֆին գինու համար, եկեղեցւոյ հաշուով։

14. Մի քառակուսի սաժէն գոյնզգոյն Եւրոպական աղիւսներ, նուէր Գրիգոր Բազրատովիչ Բազրամովից, ուսմատի գործարանատիրոջից։

15. Մի հատ միջադիր նշխար գործելու տիպար, նուէր Գրիգոր աւաք քահանայ Սուքիասեանից։

16. 1902 թ. եկեղեցւոյն գործադրելի թուղթ, գրիչ, թանաք, զմուռ, նուիրեց Պետրոս Յովհաննիսեանն։

ՊԱՏԿԵՐՔ.

17. Մի հատ պատկեր ձիթանկար, փոքրադիր, Ս. Կոյս Մարիամ մանուկն Յիսուս ի գիրկն, նուէր տիկին Նատալիա Միխայիլովնայի Սահակովրենկոյ։

ՀՈՂԱԹԱՓՆԵՐ.

18. Վեց զոյգ հողաթափներ, Եւրոպական, Եկեղեցւոյ հաշուով։

ՄԻՒՌՈՆԱՏՈՒՓ.

19. Մի հատ ոսկեզոծ արծաթեայ միւռոնատուփ, նուէր Աբրահամ Աղամեանից։

ԳՈՐԾԻՔ.

20. Մի հատ յարտուրիչ (մաղաշ) մոմերի ծայրը կըտրելու, նուէր Արգար Ստեփանիչ Գիւլամիրեանից, ևս մի պատի և մի փոքրիկ օրացոյց։

ԾԱՌԵՐ.

21. 12 հատ ակացիայի ծառեր, նուէր Գէորգ Յովհաննիսեանից։

22. Մի հատ նալբանդի ծառ, նուէր Տիգրան Յովբեանից։

ԲՈՂՉԷՔ.

23. Երկու հատ միատեսակ բողչէք իրենց աստառով, կապոյտ կտորից, Եկեղեցւոյ հաշուով։

24. Մի հատ պղնձեայ Եկեղեցւոյ կնիք, նուէր Փիլիպպոս Զահրիմանեանից։

ՄՈՒՏՔ.

	Ռ.	Կ.
1. Մոմածախքից ստացուել է . .	995	87
2. Եկեղեցում ջահեր վառելուց ստացուել է. Լեոն Հայրապետեանից 3 ր., Բաշաղ Կարապետի թաղումից 3 ր., Կոստանդին Ստեփ. Առաքելովից 3 ր., Բազարատ Վար. Թաւաքալեանի հոգեհանգստից 3 ր., Պարսկաստանցի Թումանեանի թաղումից 5 ր., Նունէ Մովսէսեանցի թաղումից 1 ր., Եղիսաբէթ Փեշտմալջեանի թաղումից 2 ր., Աւետ Միրզայեանի թաղումից լուսագնով 4 ր., Սարգիս Աւետիսեանից 3 ր., Յովհաննէս Պալեանի հոգեհանգստից 3 ր., №№ պսակից 2 ր., Պօղոս Պողոսեանից 2 ր., և Վասիլ Բարաեանի պսակից լուսագնով 4 ր.		38 —

	Ռ.	Կ.
3. Սուրբ Ծննդեան լուսագին, նուիրողների ստորագրութեամբ . - . .	48	2
4. Խաչի քաւոր Յակովբ Բարայեանից .	5	—
5. Զատկական մատաղագին, պ. պ. Ա. Արշակունու և Յ. Զամիլեանցի ձեռքով . .	143	76
6. Զատկական լուսագին, նուիրարերողների ստորագրութեամբ	46	65
7. Լուսագինք. պսակների մկրտութեան և թաղման. Վաչական Մելիքեանից 50 կ., Պ. Միքայէլեանից 50 կ., Հմայակ Դիլանեանից 1 ր., Յովակիմ Դէորդեանից 50 կ., Խաչատուր Տէր Աբրահամեանից 40 կ., Բարդուղիմէոս Թադէոսեանից 50 կ., Աղամալ Աբրահամեանից 50 կ., Անդրէաս Տէր Աստուածատրեանից 80 կ., պ. Թադիանոսեանից 50 կ., Դործակալի ձեռքով երեք քահանայից ձեռնադրութիւնից 15 ր. 92 կ., Ենովք Տէր Մկրտչեանից 45 կ., Յարութիւն Զամիլեանից 1 ր., Թադէոս Դաւթեանից 50 կ., Առաքել Բարայեանից 40 կ., Մկրտիչ Բարաեանից 1 ր., Վարդան Մելիք Անդրիասեանից 30 կ., Տիգրան Յովհաննիսեանից 1 ր., Յակովբ Բարայեանից 2 ր. 50 կ., Մերկերիոս Բաղալեանից 50 կ., բժիշկ Սողոմոն Սաժումեանից 1 ր., №№-ից 30 կ., Մեսրովբ Աւետիքեանից 30 կ., №№-ից 50 կ., Տէր Կորիւնից 35 կ., Դարսեան Տէր Մարտիրոսեանից 1 ր., Վաղարշակ Զահնազարեանից 15 կ., №№-ից 50 կ., Տէր Թափայէլի ձեռք 50 կ., Աւետիս Վասիլեանից 40 կ., Մարկոս Դիլանեանից 1 ր., Աղեքսանդր Յակովբեանից 1 ր., Բենիամին Փիլիպոսեանից 40 կ., Աբրահամ Ադամեանից 1 ր., Նիկոլա Դէորդեանից 50 կ., Յովսէփ Մելիք Աւետիսեանից 40 կ., Յարութիւն Ղարիբեանից 1 ր., №№-ից 30 կ., Արամ Ալեքսանեանից 70 կ., Աբրահէս Դարբիէլեանից 3 ր., Յակովբ անուն տօնատէրերից Տէր Գրիգորի ձեռքով 72 կ., Տէր Ղևոնդի ձեռքով 50 կ., Յարութիւն Բարայեանից 1ր. 50 կ., №№-ից 30 կ. . .	45	69
8. Հայրապետ Միրզայեանից դռնաբացէքին	10	—

	Ռ.	Կ.
9. Հարս դանձատուփերից պաշտօնեաների ներկայութեամբ	29	98
10. Երեք դանձատուփերից պաշտօնեաների ներկայութեամբ, յոգուտ աղքատաց . .	4	23
11. Երեսուն ութ ու կէս ֆունտ կոճատ մամածախից Ալեքսանդր Յակովբեանից .	15	40
12. Տան վարձ Եղոր Յովհաննիսեանից .	30	50
13. Տան վարձ Արտաշէս Տէր Ներսէսեանից	33	33
14. Զենգաւթայ այգւոյ կաղալատուից, Յարութիւն Բաղալեանից	60	—
15. Տ. տ. Բօղալեա Իւանովնայ Անդրիասեանի և Ելիզաւետա Եփրեմովնայ Ամիրխանեանի ձեռքով հաւաքած . . .	9	60
16. Առաջնորդարանից ութ հատ տաշած քարերի դին	2	16
17. Արշակ Յարութիւնեանից հին և մանր զերանների փող	2	—
18. Մի հատ անպէտք բլոկ. . .	2	80
19. Աղեքսանդր Մատվեիչ Աղամալովից երկու պղնձի վարձ	5	—
20. Փադէյ Իւանիչ Թադէոսեանից, իւր հօր կտակի համաձայն իւր մասը վճարեց .	250	—
21. Երուանդ Նիկիտիչ և Վարվարա Պետրովնայ Աֆրիկեաններից պսակադրութ. առթիւ	100	—
22. Տիգրան Փեշտմալճեանից, իւր հանգուցեալ մօր Եղիսաբէթի յիշատակին. .	50	—
23. Ալեքսանդր Իւանիչ Օհանեանից .	25	—

	Ռ.	Կ.
24. Յովհաննէս Մկրտչեան Ատուածաբանեանից	25	—
25. Իւան Գրիգորիչ Պապեանցի յիշատակին, իւր ամուսնուց	25	—
26. Մահտեսի Մկրտիչ Ոսկանեանից .	12	—
27. Միխայիլ Օսեպիչ Տէր Մարուքեանից	10	—
28. Հեղինէ Մելիք Քիշմիրեանից ի յիշատակ դստեր Հռիփսիմէի , , ,	10	—
29. Պետրոս Քարհանեանից , ,	10	—
30. Հայկ Գէորգեան Յովհաննիսեանից ,	8	—
31, Մահտեսի Աղաբէգ Սրապեանից ,	5	—
Գումար	2057 ր,	99 կ,

ԵԼՔ

	Ռ.	Կ.
1. Եկեղեցւոյ շրջապարսպի և առունների համար ութսուն և չորս սաժեն երկայնութիւն, քարերի գին Երուանդ և Աւետիս Տէր Աւետիքեաններին . - . . .	500	—
2. Աւազ բերող թուրքին . . .	201	50
3. Ալեքսանդրապօլից մի վագոն կրի .	266	—
4. Եկեղեցւոյ պարսպի հիմք քանդողներին և հին պատերը վերացնողներին . .	62	25

	Ռ.	Կ.
5. Հիմք դցող որմնադիր Համբարձումին.	90	—
6. Ասֆալտի փող, Իսահակ Կարամանիչ Մելիք Աղամալեանցին . . .	100	—
7. Երկու բոչկայ մազութի գին Արտեմ Առաքելովին	11	12
8. Ասֆալտ եփող դցող հիմքի վերայ Յակոբ Վիրաբեանին	40	—
9. Եօթ քառակուսի սաժէն սոմեաններ երկաթեայ վանդակի տակ փռելու համար .	77	—
10. Արշակ Յարութիւնեան Կլեկչեանցին, ութսուն և չորս սաժէն երկայնութիւն և կէս սաժէն բարձրութիւն պարսպատակ երկու երեսը կոփած քարերից նոյնպէս և նոյն երկայնութեամբ առուն, շինելու վարձ և պարսպի քառակուսի սաժէնը 10 ռուբլով. իսկ առուի շինելու իւրաքանչիւր սաժէնը 1 ր. 60 կ. նոյն վարպետներին ըստ կարգադրութեան Ուպրավայի անդամների արտաքոյ պահանջների նոյն առուի շինութեան ևս 12 ռուբլի վճարուեցաւ, բոլորը	568	—
11. Ութ խալուար 20 փութ կրի գին, Սարգիս Հախնազարեանցին . . .	86	30
12. Երեք հարիւր չորս ու կէս փութ երկաթ Աբրահամ Աղամեանից . .	578	55
13. Աբրահամ Աղամեանցին ցեմենտի և մանր հարկաւորելիքների . . .	49	63
14. Արամ Կարապետեանցին վանդակները շինելու վարձ, փութը 1 ր. 10 կոպէկով .	339	75
15. Արշակ Յարութիւնեան Կլեկչեանցին երեսուն և ինն օիներ տաշելուն . .	35	—

	Ռ.	Կ.
16. Որմնադիր Մահտեսի Մկրտիչ Ոսկանեանցին, պարսպից ներս մտնող երկաթեայ դռների տակը սալայատակելուն և մուտքերի աջ ու ձախ բարաւորները աւելացնելուն մինչև իւր չափը	14	—
17. Պ. Քաղաքապետի պահանջին համեմատ եկեղեցւոյ պարսպի մեծ գրան առաջից հինգ սաժէն երկայնութեամբ շինուած առուն նորից խորացնելու վարձ տրուեցաւ վարպետ Արտաշէս Գալստեանցին	6	—
18. Աբրահամ Աղամեանցի խանութից զանազան հարկաւոր իրեղէնների. . .	19	78
19. Յակոբ Խորասանովին, զանազան իրեղէններ շինելու հարկաւորելիք . ,	3	65
20 Հինգ ու կէս սաժէն տօմսեի, զանգակատան յատակը ծածկելու, տրուեցաւ գործարանատէր պ. Բաղրամեանցին չորս և կէս սաժէնի գին 30 ռուբլի, իսկ մի սաժէնի գինը՝ պարոնը եկեղեցոյն ընծայեց . . .	30	—
21. Զանգակատան յատակը տօմսեներով ծածկելու վարձ վարպետներին . .	5	30
22. Մահտեսի Մկրտիչ Ոսկանեանցին, պարսպի համար պակասած 23 հատ սիւները տաշելուն և զանգակատան պարապետը շինելու սալայատակելուն տրուեցաւ . . .	112	—
23. Պրոստ Սարգիս Ալթունեանցին զանգակների ճախարակներ շինելուն . .	8	59
24. Պրոստ Արամ Կարապետեանցին զանգակների լեզուակները փոխելուն, թոկեր գնելուն ու զանգերի զարկուելը կանոնաւորելուն	20	—

	Ռ.	Կ.
25. Ըստ կարգադրութեան Տ. Առաջնորդի Սուքիաս Սրբազանի, քաղաքիս ուխտատեղոյ «Գեթսեմանի» վերանորոգման առթիւ տրուեցաւ երեցփոխ պ. Վ. Մաղաթեանցին .	50	—
26. յԸնթացս տարուան եկեղեցւոյ պաշտօնեաներին ռոճիկ	472	5
27. 5 փութ 37 ֆունտ № 1 մոմի .	277	20
28. Մէկ ու կէս ֆունտ կնդրուկ, տաս ֆունտ խունկ	7	—
29. Ալիւր նշխարի	8	64
30. Ածուխի . . . , .	8	31
31. Յորդանանու շինութեան վճար .	15	92
32. Եկեղեցւոյ քահանայի միայնութեան պատճառով, բարձրապատիւ Մկրտիչ Ծայրագոյն վարդապետ Տէր Թադէոսեանը մեր խընդրանացը ղիջանելով, մօտ երեք ամիս օգնեց քահանային իւր շարունակ ներկայութեամբ եկեղեցում և եկեղեցւոյ կողմից որպէս ժամոց 20 ռ. հայր սուրբը շատ դժուարութեամբ ընդունեց	20	—
33. Երկու քահանայից մատաղի օրը որպէս ժամոց և տիրացուներին . . .	10	—
34. Կոյրերի օգտին, գործակալին տրուեցաւ	3	—
35. Մի չքաւոր ընտանիքի . . .	3	—
36. Եկեղեցոյ տան ու այգւոյ թագաւորական հարկերը	9	50
37. Ռափայել Ջանաշուիլուն, մկրտութեան աւազանի ջրանցքը ուղղելուն . . .	8	—

38. Էմին Տէր Գրիգորեանցին 360 հատ հաշուետետրներ տպելուն . . . 28 50

39. Պետրոս Ահարոնեանցին զանգակատունը ներկելուն . . . . . 12 —

40. Մի ֆուրաժ· բուրվառ Թադէոսեանից 4 —

41. Կոլոր սեղան բուրվառներ կախելու համար Յովհաննէս Բուդաղեանից . . . 5 —

42. Վեց զոյգ հողաթափներ Նիկոլա Յարութիւնեանից . . . . . 10 —

43. Արտաշէս Տէր Ներսէսեանցին հանգուցեալ տ. Ջաւահիրի կտակի համաձայն, մնացեալ հաշիւը բոլորովին վերջացաւ Նօտար Արտաշէս Շ. Գաբրիէլեանի ձեռքով վճարուեց 133 33

44. Փորագրիչ Փիլիպոս Զահրիմանեանցին, անցեալ տարուանից մնացած մարմարների վերայ փորագրելու վարձից . . 20 —

45. Մի զոյգ միանման բրոնձ ապակեայ Ջահեր Թադէոսեանից 113 20

46. Կոնսիստորիայից ստացած երեք մատեաններին և Մելիք Թանգեանցին . 5 50

47. Արտաքնոցները մաքրողներին. . 9 —

48. Սուդերնից ծախքեր . . . 4 50

49. Ծառեր տնկելու 42 փոս փորելուն . 4 20

50. Ոռնալվայի կարագ իւղի . . 2 5

51. 27 շապիկի երկու անգամ լուանալուն. 4 10

52. Ութսուն և չորս սաժէն երկայնութեամբ մայթերը (տրօտուարներ) հողով լցնելուն, եկեղեցւոյ բազում ալէանները երկու կողմի առուներով շինելուն, եօթ տեղ կամուրջներ կապել տալուն և եկեղեցւոյ բաղը դէպի արևմուտք ամբողջովին հողով լցնել հաւասարացնելուն արևելեանին համեմատ մակերևոյթով. . 70 45

53. Եկեղեցւոյն մանր հարկաւորելիքների. շուաբրացու մեշոկների, բողչայ կարելու կտորների, զիգրոսկոպի բամբակ միւռոնի համար, մի հատ ձեռքի փուքսի, լուցկիների, երկու հատ կոդպէքների, նամակների, կուժերի, երկու հատ հող կրելու նասիլկաների, կարմիր, սպիտակ և կանաչ ապրեշումեայ թելերի, մշակների (կիր բերող և ասֆալդ դարտակող), մի անգամ վակզալ գնալու ֆայտոնի վարձ, վակզալից տոմսերը բերելու վարձ, ցենզորին և մանր բաների 18 66

Գումարն է . 4561 53

Անցեալ տարուանից եկեղեցին ունի չվճարած պարտք №№-ին 281 30

Հանգուցեալ տ. Ջաւահիր Մելիք Զահնազարեանցի կտակի համաձայն, եկեղեցին մնում է պարտ օրիորդ Մարիամ Զահնազարեանցին, որը պիտի վճարուի նրա մարդու գնալուց յետոյ և մինչև այն ժամանակ կ'մայ կայսերական բանկում։ 300 —

Ելք եւ պարտքի գումարն է . . . 5142 ր. 83 կ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

1903 թ. Յունուարի 13։ Ներքոյ գրուած Երևանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հաշուետեսներս, քննելով պ. Երեսփոխ Դիմիտր Գապովի ներկայութեաբ, եկեղեցոյ մուտքը, սկսած 1902 թ. Յունուարի մէկից, մինչև 1903 թուի Յունուարի մէկը. թուով հարիւր երեսուն և մէկ համար. եղաւ երկու հազար յիսուն և եօթ ռուբլի իններսուն ինն կոպ. (2057 ռ. 99 կ.) և ելքը սոյն վերոյգրեալ ժամանակամիջոցում, հարիւր յիսուն և չորս համարով և պարտքերի ցուցակը եօթ համարով և ծանօթութիւնով. հաշուելով ելքը ընդ ամենը հինգ հազար հարիւր քառասուն և երկու ռուբլի ութսուն և երեք կոպ. (5142 ռ. 83 կ.). և համեմատելով բոլոր ծախքերը ու ստացուածները փաստաթղթերի հետ՝ գտանք բոլորը ուղիղ և եկեղեցին մնաց պարտ զանազան անձինքների ընդամենը երեք հազար քառասուն և չորս ռուբլի ութսուն և չորս կոպ. որոյ վասն ստորագրեմք՝ Դաբրիէլ Մնացականեանց, Տիգրան Աֆրիկեանց։

13152

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Պատիւ ունիմ յայտնելու յետևեալ մանրամասնութիւնները արած ծախսերի համար։

1). Եկեղեցւոյ երեք հաշուատեսները, պ. պ. Տիգրան և Երվանդ Նիկիտիչ Աֆրիկեանները և Գրիգոր Ամիրեանը, օգնել են ինձ եկեղեցւոյ շրջապարսպի և առուների շինութեան գործում, վարպետներ գտնելով, հետները սակարգութեան մտնելով և վարձի գները որոշելով. պ. Տիգրան Աֆրիկեանցը՝ եկեղեցւոյ կասսայի գատարկութիւնը տեսնելով՝ իւր գրպանից առանց տոկոսի 793 ռ. 75 կ. տուեց ինձ գործադրելու յիշեալ շինութեանց համար, որ մինչև այսօր դեռ անվճար է մնացած, իսկ պ. Գաբրիէլ Մնացականեանցը մատակարարել է նոյն շինութեան համար ածան գնով աւազ ու կիր։

2). Շնորհակալութեան արժանի է մեր քաղաքի վաճառականներից և պ. Աբրահամ Աղամեանցը, որ բացի երեք հարիւր չորս փութ (304 փութ) երկաթեղէնը ցած գնով, գրեթէ անվաստակ թող տուաւ եկեղեցւոյն, նոյնպէս ցեմենտ և այլ իրեղէններ. տուած ունի և փող վարպետին, որոնց գումարն անում է 807 ռ. 40 կ.

3). Վճարած չէ Ալէքսանդրապօլցի պ. Խաչատուր Իւանովիչ Խսահակեանցին կրի գին 240 ռ.

4). Նոյնպէս և պ. Տէր Աւետիքեաններին քարերի գնից մնացած է անվճար 200 ռ.

5)· Եկեղեցւոյ շրջապարսպի հիմքի վերայ գետնին հաւասար եղած մասերում՝ ասֆայլտով ծածկուեցաւ խոնաւութիւնից պատը պահպանելու համար՝ գործադրուած ասֆայլտի գինը 100 ր· դեռ չէ վճարած մեծապատիւ Իսահակ Կարամանիչ Մելիք Աղամալեանցին։

6)· Պ· Սարգիս Ոսկանեան Աւետիսեանցին եկեղեցին մնում է պարտ 200 ր· որն որ վերցրած է առձեռն։

7)· Եկեղեցին մնում է պարտ մոմավաճառի խանութին անցեալ տարուանից 200 ր·

8) Հանգուցեալ տ· Ովսաննա Ղազարեանցի կտակը, որ Եկեղեցւոյն 3000 ր· է կտակել· մի ամուսան մէջ պետական բոլոր հաստատութիւններում մեծ չարչարանքով հաստատել տալուց յետոյ, ես չէի կարծում՝ որ հանգուցեալի ժառանգները կտակուած փողերի վերայ դատով արգելք դնել կտային և այսքան կուշացուէր եկեղեցւոյն հասանելիքը և որի դեռ չստանալու պատճառով ու յուսով եկեղեցին այսչափ անվճար պարտքեր ունի դեռ, բայց յուսալի է, որ շուտով կստացուի յիշեալ 3000 ր· և իւրաքանչիւր պարոն կտանայ եկեղեցուց իրեն հասանելին, իմ անկեղծ ու մեծ շնորհակալութեամբս։

ՁԱՆԱՁԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1)· Երևանայ բոլոր հայ եկեղեցիները հնուց կառուցուած լինելով քաղաքիս հեռաւոր անկիւններում՝ այդ անյարմարութիւնը քաղաքացիք ի նկատի ունեցած՝ ձեռնարկել են քաղաքիս կետրոնում 1868 թ· նոր եկեղեցւոյ շինութեան, որի պլանը ֆասադը Հոգևոր իշխանութեան կողմից առաջարկուած Բարձրագոյն հաստատութեամբ մեծ Իշխան փոխարքայի ձեռքով վաւերացուել է որպէս ԵՐԵՒԱՆԱՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, «Армяно Григорянскій Соборъ въ гор. Эривани».

2)· Որպէս նախանձախնդիր զաւակ հայ եկեղեցւոյ, ինձ իմ պաշտօնս յանձնուած օրից՝ հետևելով Սուրբ Էջմիածնին՝ վերացրի եկեղեցուց այն օտարամուտ վատ սովորութիւնը, որ մտել է մեր եկեղեցին կեղեքումների ժամանակից, այդ գանձանակ մանգալն է, որից բնականապէս մեր ժողովուրդը աւելորդ գանձանակներից խորշելով խորշում է և ժամերգութեան լաւ ժամանակը թողնում է եկեղեցին և գնում է գանձանակից փախչում։ (Մեր եկեղեցում մի միայն պատարագին «մէջ աշխարհի» գանձանակը կայ)։ Գանձանակի փոխարէն աւելացրի մոմերի գինը՝ որը տուեց գեղեցիկ արդիւնք և որով կառավարւում են, եկեղեցին և իւր պաշտօնեաները։ Զնայելով որ քաղաքիս նոր եկեղե-

եկեղեցին դեռ որոշ ծուխ չունի, բայց ես որքան կարողացել եմ տեղեկանալ, քաղաքիս գրեթէ մնացեալ բոլոր հայ եկեղեցեաց մոմաճախքի չափ մեր եկեղեցին մոմի արդիւնք է բերում և ես կարծում եմ, որ այս եկեղեցում գանձանակ չպտելուց է։

3) Զնայելով որ հայ քրիստոնեայ եկեղեցւոյ բարոյական սկզբմամբ, եկեղեցում, բայի ամենօրեայ Աստուածպաշտութիւնը, անհրաժեշտ է ունենալ և քարոզող հոգևորական, քարոզող, որը աւետարանի ջերմ սիրոյ արգասիքը կարողանայ [illegible]ացնել տալ ժողովրդին, բայց այդ մասին, ըստ բոլոր ջանքս ապարդիւն անցան, երևի թէ մենք տակաւին պատրաստի քարոզ խօսող հոգևորականներ չունենք։

4)· Եկեղեցի մտնելու օրից մի առանձին հոգով ենք վերաբերուել եկեղեցւոյ բարեզարդութեան և մաքրութեան վերայ· ոչոք մեզնից հրամայող չի եղել, ամենքս էլ եղել ենք հաւասար ծառաներ Աստուծոյ տաճարի և գործը մաքուր, ջինջ ու յիստակ պահել։

5)· Գրեթէ եկեղեցւոյ օծումից մինչև այսօր բարձրապատիւ Մկրտիչ ծայրագոյն վարդապետ Տէր Թադէոսեանցը (հոգաբարձու. եկեղեցւոյ շինութեան), աշնան վերջերից մինչև գարնան վերջերը անընդհատ յաճախելով եկեղեցի ձրիապէս իւր հմուտ ժամակարգութեամբ փառաւորեցնում է Աստուածպաշտութիւնը և օգնում քահանային, մանաւանդ այս տարի, երբ եկեղեցւոյ քահանան միայնակ է եկեղեցում։

6)· Եկեղեցւոյ օծումից մինչև այսօր, ամենայն կիւրակէ պատարագին բուրվառակրի պաշտօնը կատարում է սիրով իւր քաղցր երգեցողութեամբ ձրիապէս պ· Սիւնէսիոս Տէր Թադէոսեանցը, կատարելով իւր արժանաւոր պապ Մկրտիչ ծ· Վարդապետի պատուէրը։

7) Շնորհակալութեան և գովասանքի արժանի են տեղոյս թեմական դպրանոցի բարձր դասարաններից այն աշակերտները, որոնք սկսեալ անցեալ 1902 թ·ի Հոկտեմբեր ամսից մինչև այսօր եկեղեցում շաբաթ երեկոյեան և կիրակէ պատարագին երգում են, ստանալով եկեղեցուց չնչին ամսավարձ այնէլ յօգուտ իրենց չքաւոր ընկերների։

8) Եկեղեցւոյս արժանապատիւ Գրիգոր աւագ քահանայ Սուքիասեանը, բացի եկեղեցւոյ վերաբերեալ պաշտօնէութիւնը իրաւամբ կատարելուց, մենակ մարդն էր, որ եկեղեցւոյ շինութեանց դժուար գործերի մէջ սիրով և ամենայն պատրաստակամութեամբ օգնել է ինձ, որոյ մասին շնորհակալութիւն եմ յայտնել իւր ժամանակին, խնդրելով վարձատրել նրան Բարձրագոյն Հոգևոր իշխանութեանը։

9)· 1902 ամի Սուրբ Զատկի մատաղագին ժողովողներ պ· պ· Ցարուբիւն Շամիլեանց և Աղաջան Արշակունի կատարելով իրենց պարտքը, ներկայացրին ժողոված փողերը երեսփոխիս· իսկ ես ի նկատի ունենալով, որ այդ օրը քաղաքիս բոլոր եկեղեցիներում զենուած են զատկական մատաղ, աւելորդ համարեցի ժողոված բոլոր մատաղագինը ծախսել· ուստի խնդրեցինք մի քանի պարոններից, որ իւր ժամանակին գան համեստ ու յարմար մատաղի հոգս քաշեն· թէ և խօսք տուին, բայց չկարողացան գալ հիւանդներ ունենալու պատճառաւ։

10)· Միաժամանակ քաղաքիս երեք եկեղեցիներից անյայտացան արծաթեայ բուրվառներ 1902 թ· գարնանը, որոց թւում՝ և մեր եկեղեցուց մի ֆուրաժէ բուրվառ դեռ չգործածուած 4—5 բուրլիանոց։

11)· Շնորհակալութիւնս յայտնում եմ Մեծ· Յովհաննէս Քոչարեանցին, որը տեսնելով եկեղեցւոյ դրութիւնը փողի կողմից, որպէս զի երկաթէ վանդակները և դռները չփչանան ժանգից, սիրով յանձն առաւ ներկել բոլոր երկաթեղէնը իւր ծախսով և մեր ցոյց տուած գոյնով· ուշ լինելու պատճառով աշնանը քսեց մի երեսը, այս գարնան սկզբներին կը քսուի միւս երեսը։

12)· Եկեղեցւոյ ցածր պաշտօնեաների հիւանդութեան ժամանակ մեծ· բժ· Յովհաննէս Յովհանիսեան և Արամ Նազարիչ Տէր Աւետիսեանց առանց վարձատրութեան բժշկական օգնութիւն էին հասցնում՝ գալով հիւանդի տունը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Երևանայ հայ հասարակութեան մէջ տասնեակ տարի ուսուցչական համեստ պաշտօնավարութեանս վերայ քաղաքիս հայ ժողովուրդը աւելացրեց հրաւիրելով ինձ իւր օրինաւոր, ընտրութեամբ նոր կառուցուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն երեսփոխի ըստ ամենայնի դժուար և պատասխանատու պաշտօնավարութիւնը 1900 թ· Ապրիլի 23-ին մինչև օրս։ Արդարև դժուար էր մի նոր կառուցված անշուք, անծխական, ոչ մի շարժական իրեղէն չունեցող, մինչև իսկ մի կանթեղ չունեցող, հողից յատակ ու չորս տկլոր պատեր, միմիայն երեք հատ դռներ, երեք հատ բալանիներ ունեցող եկեղցում պաշտօնավարել, թէև դժուար էր, բայց ես խրախուսուած լինելով այն հասարակութեան հրաւէրից, որ ինձ կանչեց Աստուծոյ տունը զարդարելու ու նրան ծառայելու։

Ահա երեք տարին լրանալու վերայ է ի տես հայ հասարակութեան ներկայացնում եմ մի շքեղ, փառաւոր ու լի արդ ու զարդով և ոչ մի բանով պակաս թէ արտաքուստ և ի ներքուստ եկեղեցին, որ պատիւ է բերում Երևանայ հայ հասարակութեանը իրենց նուիրաբերութիւններով դէպի եկեղեցին և մեծ մխիթարանք ու սփոփանք իմ երեքամեայ քրտնաբեր ծառայութեանս։ Յայտնելով հայ հասարակութեան և իմ խորին շնորհակալութիւնս, որ ինչ որ եկեղեցւոյ պայծառութեան համար հոգացել է՝ այդ եղել է ժողովրդեանդ Ձեր սիրայօժար ընծայաբերութիւնը ըստ իմ պահանջման։ Ներողութիւն եմ խնդրում իմ դէպի Ձեզ աւել կամ պակաս վերաբերվելուս, խնդրում եմ և Ձեր ներողամտութիւնը իմ ծառայութեանս վերաբերմամբ. սորա հետ և այս դժուարակիր պաշտօնից երեք ամեայ ծառայութեանս ժամանակը լրանալուց զկնի՝ համարել ինձ ազատ։

Եպիսկոպոս Սուքիաս Գրիգոր Լուսաւորիչ
Էջմիածնայ Երևանայ ԴԻՄԻՏՐԻ ՊԱՊՈՎ